ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Աբովյան գյուղական համայնք, Ն. Զարյան փ. 12/1,
Հեռ. 6-23-13.Էլ. փոստ ABOVYAN_GP@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 05 » դեկտեմբերի 2011թվականի N _ 8_

2012թ.-Ի „ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ„ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության „Տեղական ինքնակառավարման մասին„ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին *որոշում է*՝

18. Սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար

1.1 մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող

ա) անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության

թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն 1500 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության տեղական տուրքը սահմանվում է 2000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 4000 դրամ.

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 4000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

6. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ, կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար՝ 0 դրամ:

7. Համայնքի տարածքում հող հատկացնելու, հետ վերցնելու, վարձակալությամբ տրամադրելու, անհրաժեշտ չափումներ կատարելու համար սահմանել 1000 դրամ:

8. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթների և աճուրդների մասնակցության համար սահմանել վճար 1000 դրամ:

9. 1.2.3. կետերի համար կիրառվել է 0.5 գործակիցը:

Կողմ (7)	Դեմ(0)	Ձեռնպահ (0)
Իշխան Եղիազարյան		
Մարատ Գալստյան		
Լևոն Պետրոսյան		
Արտակ Խաչատրյան		
Դավիթ Գրիգորյան		
Ռոմիկ Պապոյան		
Սուրեն Մանուկյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՍԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Աբովյան գյուղական համայնք, Ն. Զարյան փ. 12/1,
Հեռ. 6-23-13.Էլ. փոստ ABOVYAN_GP@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 05 » դեկտեմբերի 2011թվականի N _ 8_

2011Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության „Տեղական ինքնակառավարման մասին„ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով համայնքի ավագանին *որոշում է՝*

17. 1. 04.02.01.51 -- Գյուղատնտեսական կենդանիներ ծրագրով նախատեսված գումարից պակասեցնել 300.0 հազար դրամ:

2. 04.05.01.58 Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում ծրագրի 5134 հոդվածից 200.0 հազար դրամ պակասեցնել և տալ 06.06.01.62 Նախագծային աշխատանքներ ծրագրի 5134 հոդվածին:

Կողմ (7)	Դեմ(0)	Ձեռնպահ (0)
Իշխան Եղիազարյան		
Մարատ Գալստյան		
Լևոն Պետրոսյան		
Արտակ Խաչատրյան		
Դավիթ Գրիգորյան		
Ռոմիկ Պապոյան		
Սուրեն Մանուկյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՍԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Աբովյան գյուղական համայնք, Ն. Զարյան փ. 12/1,
Հեռ. 6-23-13.Էլ. փոստ ABOVYAN_GP@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 05 » դեկտեմբերի 2011թվականի N _ 8_

2011Թ.-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով համայնքի անագանին *որոշում է*՝

16. Բյուջեի եկամտային մասով նախատեսված պատվիրակված լիազորությունների գումարը պակասեցնել 300.0 հազար դրամով:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ (0)

Իշխան Եղիազարյան
Մարատ Գալստյան
Լևոն Պետրոսյան
Արտակ Խաչատրյան
Դավիթ Գրիգորյան
Ռոմիկ Պապոյան
Սուրեն Մանուկյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ